## *1.2.6. Առևտուր, այլ ծառայություններ (սպառողական շուկա)*

2012թ. հունվար-հունիսին ԼՂՀ սպառողական շուկան (ըստ տնտեսավարող սուբյեկտներից ստացված հաշվետվությունների և չհաշվառվող դաշտի լրահաշվարկի) կազմել է 47783.8 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, համադրելի գներով, աճելով 9.0 տոկոսով:

| | 2011թ. հունվար-հունիսի փաստացի ծավալը#, մլն դրամ | 2012թ. հունվար-հունիսի փաստացի ծավալը, մլն դրամ | 2012թ. հունվար-հունիսը 2011թ. հունվար-հունիսի նկատմամբ, համադրելի գներով, տոկոսներով | Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | 2011թ. հունվար-հունիս# | 2012թ. հունվար-հունիս |
| **Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը** | **43397.5** | **47783.8** | **109.0** | **100.0** | **100.0** |
| *այդ թվում՝* | | | | | |
| մանրածախ առևտրի շրջանառությունը | 36173.3 | 40052.4 | 110.2 | 83.4 | 83.8 |
| բնակչությանը մատուցված ծառայությունները | 7224.2 | 7731.4 | 103.6 | 16.6 | 16.2 |

*Սպառողական շուկայում մանրածախ առևտրի շրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների կառուցվածքն 2011- 2012թթ. հունվար-հունիսին (տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ)*




### *Մանրածախ առևտուր*

2012թ. հունվար-հունիսին մանրածախ առևտրի շրջանառությունը, ընթացիկ գներով, կազմել է 40052.4 մլն դրամ, որը 2011թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 10.2 տոկոսով:

*Մանրածախ առևտրի շրջանառությունը 2012թ. հունվար-հունիսին*

| | 2012թ. հունվար-հունիսին | | Ընդամենի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| | Շրջանառությունը, ընդամենը, մլն դրամ | 2011թ. հունվար-հունիսի նկատմամբ, համադրելի գներով, % | |
| **Մանրածախ առևտուր, ընդամենը** | **40052.4** | **110.2** | **100.0** |
| *այդ թվում՝* | | | |
| խանութների | 29718.9 | 110.6 | 74.2 |
| սպառողական ապրանքների շուկաների | 2523.3 | 100.6 | 6.3 |
| գյուղատնտեսական ապրանքների շուկաների | 1361.8 | 117.1 | 3.4 |
| առևտրի այլ օբյեկտների | 6448.4 | 110.9 | 16.1 |

*Մանրածախ առևտրի շրջանառությունը ըստ ձևավորման աղբյուրների, 2012թ. հունվար-հունիսին*




*Մանրածախ առևտրի շրջանառությունն ըստ ԼՂՀ շրջանների, 2011-2012թթ. հունվար-հունիսին*

| | 2011թ. հունվար-հունիսի փաստացի ծավալը, մլն դրամ | Ընդամենի նկատմամբ, % | 2012թ. հունվար-հունիսի փաստացի ծավալը, մլն դրամ | Ընդամենի նկատմամբ, % |
|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | **36173.3** | **100.0** | **40052.4** | **100.0** |
| ք. Ստեփանակերտ | 26071.7 | 72.1 | 29060.3 | 72.6 |
| Ասկերան | 2003.4 | 5.6 | 2182.3 | 5.5 |
| Հադրութ | 1491.3 | 4.1 | 1904.5 | 4.8 |
| Մարտակերտ | 1886.9 | 5.2 | 1734.3 | 4.3 |
| Մարտունի | 3581.2 | 9.9 | 4063.3 | 10.1 |
| Շահումյան | 154.2 | 0.4 | 165.8 | 0.4 |
| Շուշի | 483.6 | 1.3 | 488.5 | 1.2 |
| Քաշաթաղ | 501.0 | 1.4 | 453.4 | 1.1 |

ԼՂՀ շրջաններին բնորոշ են առևտրի շրջանառության տարբեր մակարդակներ: Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ շրջանների առևտրի շրջանառության մակարդակների տարբերությունը, հիմնականում, պայմանավորված է առևտրի օբյեկտների քանակով, բնակչության թվաքանակով, ինչպես նաև բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակի տարբերություններով և արտաքին շուկաներին կապող կոմունիկացիաների տեղաբաշխմամբ:

*Առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ շրջանների, 2012թ. հունվար-հունիսին*




2012թ. հունվար- հունիսին մեկ բնակչի հաշվով առևտրի շրջանառությունը կազմել է 275204.2 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, համադրելի գներով, աճելով 9.3 տոկոսով:

*Մանրածախ առևտրի շրջանառության համեմատական ակտիվությունը*

| | 2011թ. հունվար-հունիսին | 2012թ. հունվար-հունիսին | 2012թ. հունվար- հունիսը տոկոսով 2011թ. հունվար-հունիսի նկատմամբ (համադրելի գներով) |
|---|---|---|---|
| **Ընդամենը, *մլն դրամ*** | **36173.3** | **40052.4** | **110.2** |
| Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառության ծավալը, *դրամ* | 250615.2 | 275204.2 | 109.3 |

### *Բնակչությանը մատուցված ծառայություններ*

2012թ. հունվար-հունիսին հանրապետությունում բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը, փաստացի գներով, կազմել է 7731.4 մլն դրամ, որը 2011թ. հունվար- հունիսի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 3.6 տոկոսով.:

2012թ. հունվար-հունիսին 2011թ. հունվար-հունիսի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 3.6 տոկոս աճ, որը հիմնականում պայմանավորված է առողջապահության (22.4 %), տոմսերի վաճառքի (16.4%), կրթության (5.2%), հյուրանոցային(4.2%) և ֆինանսական գործունեության (2.4 %) ծառայությունների սակագների հավելաճով:

### *Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալն ըստ տեսակների*

| | Փաստացի ծավալը, մլն դրամ | | 2012թ. հունվար- հունիսը տոկոսով 2011թ. հունվար- հունիսի նկատմամբ (համադրելի գներով) |
|---|---|---|---|
| | 2011թ. հունվար -հունիսին# | 2012թ. հունվար -հունիսին | |
| ***Ընդամենը*** | ***7224.2*** | ***7731.4*** | ***103.6*** |
| *այդ թվում`* | | | |
| հյուրանոցներ և ռեստորաններ | 584.7 | 651.5 | 106.9 |
| տրանսպորտ | 1170.1 | 1232.1 | 103.5 |
| կապ | 2481.7 | 2633.3 | 124.5 |
| կոմունալ | 71.5 | 109.5 | 153.1 |
| սոցիալական | 59.6 | 66.7 | 118.7 |
| անհատական | 188.9 | 192.6 | 100.9 |
| կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում | 65.3 | 62.4 | 94.6 |
| ֆինանսական գործունեություն | 1054.9 | 1229.3 | 113.8 |
| անշարժ գույքի հետ կապված գործունեություն | 111.4 | 107.4 | 96.4 |
| տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառ | 5.9 | 10.1 | 171.2 |
| կրթություն | 865.5 | 795.9 | 87.4 |
| առողջապահություն | 107.2 | 111.8 | 85.2 |
| այլ տեսակի ծառայություններ | 457.5 | 528.8 | 128.3 |

Բերված տվյալներից երևում է, որ 2012թ. հունվար-հունիսին նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ աճել են բնակչությանը մատուցված բոլոր տեսակի վճարովի ծառայությունների ծավալները, բացի կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգման, անշարժ գույքի հետ կապված գործունեության, կրթության և առողջապահության ծավալներից:

2012թ. հունվար-հունիսին բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել կապի (2633.3 մլն դրամ), տրանսպորտի (1232.1 մլն դրամ), ֆինանսական գործունեության (1229.3 մլն դրամ) և կրթության (795.9 մլն դրամ) ծառայությունները, համապատասխանաբար` 34.1, 16.0, 15.9 և 10.3 տոկոս:

### *Բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների կառուցվածքն ըստ տեսակների 2012թ. հունվար-հունիսին*



*Բնակչությանը մատուցված ծառայությունների տեսակների բաշխվածությունն ըստ Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ մյուս շրջանների, 2012թ. հունվար-հունիսին*




2012թ. հունվար-հունիսին բնակչությանը մատուցված բոլոր տեսակի ծառայությունների ոլորտում առկա է ք.Ստեփանակերտի գերակայությունը: Ըստ ծառայությունների տեսակի շրջանների տեսակարար կշիռը տատանվել է 4.6-42.3 տոկոսի սահմաններում:

*Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ մյուս շրջանների, 2012թ. հունվար-հունիսին*




2012թ. հունվար-հունիսին հանրապետությունում բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 77.9 տոկոսը բաժին է ընկել ք. Ստեփանակերտին, 22.1 տոկոսը՝ մյուս շրջաններին:

*Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի կառուցվածքն ըստ ԼՂՀ շրջանների, 2012թ. հունվար-հունիսին*




*Մանրածախ առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալի համեմատական ակտիվությունն ըստ շրջանների, 2012թ. հունվար-հունիսին*

| | Առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը, *մլն դրամ* | Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը, *դրամ* | Մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը հանրապետության միջինի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| **Ընդամենը** | **47783.8** | **328327.5** | **100.0** |
| ք. Ստեփանակերտ | 35085.9 | 653052.5 | 198.9 |
| Ասկերան | 2528.8 | 139905.9 | 42.6 |
| Հադրութ | 2189.2 | 172895.3 | 52.7 |
| Մարտակերտ | 2049.6 | 103114.2 | 31.4 |
| Մարտունի | 4482.3 | 186723.6 | 56.9 |
| Շահումյան | 175.7 | 59802.6 | 18.2 |
| Շուշի | 686.7 | 125013.7 | 38.1 |
| Քաշաթաղ | 585.6 | 66841.7 | 20.4 |